ԿԱՐԾԻՔ

Արժանապատիվ Տեր Արարատ քահանա Պողոսյանի «Հայոց եկեղեցին ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարում» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության մասին

ՀՀ անկախության հռչակումից հետո լայն հնարավորություններ ստեղծվեցին ազգային պատմության անաչառ ուսումնասիրության, նորովի, առանց կուսակցական-գաղափարական արգելքների, հարկադրանքների ու սահմանափակումների, ուսումնասիրել ու ներկայացնել համահայկական կարևորագույն ազգային-պետական կառույցի՝ Հայոց եկեղեցու պատմության ու գործունեության առանցքային դրվագները: Հատկապես հայոց միասնական պետության բացակայության ժամանակաշրջանների պատմության ուսումնասիրությունը անքակտելիորեն ընթանում է Հայոց եկեղեցու պատմության ու գործունեության հետազոտությամբ: Հարկ է նշել, որ պաշտպանության ներկայացված թեկնածուական ատենախոսության ընդգրկած պատմական ժամանակաշրջանը հայոց պատմության՝ համեմատաբար թերի ուսումնասիրված ժամանակաշրջաններից է, որի բազմաթիվ առանցքային հարցեր ու իրադարձություններ կարոտ են խորաքնին ու համակարգված հետազոտության: Հետևաբար՝ անհրաժեշտ է հայոց պատմության՝ համեմատաբար քիչ ուսումնասիրված, բայց և կարևորություն ունեցող թեմաների նկատմամբ հետազոտողների հետաքրքրությունը մեծացնել, ավելի առարկայական դարձնել տարբեր խնդիրների ու հիմնահարցերի վերաբերյալ կատարված գիտական օգտաշատ ուսումնասիրություններն ու հրատարակությունները: Այսօր, առավել, քան երբևէ, հայ պատմագիտությունը պարտավորություն ունի սեփական ժողովրդի պատմությունը և քաղաքակրթական ձեռքբերումները պաշտպանելու բոլոր տեսակի ոտնձգություններից ու կեղծարարություններից, օտարների կողմից սեփականելու մոլուցքից և նկրտումներից:

Գրախոսման ներկայացված սույն ուսումնասիրությունը բավական մեծ հետաքրքրություն է ներկայացնում ընտրված թեմայի արդիականությամբ և հրատապությամբ: Ատենախոսը խնդիր է դրել հանգամանորեն լուսաբանել ու ներկայացնել XVI–XVII դարերի հայ ազատագրական պայքարը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղն ու դերը նշված ժամանակաշրջանի հայ ազատագրական պայքարում, հայ ազատագրական պայքարի գաղափարական հիմքերն ու նպաստող հանգամանքները, Ս. Էջմիածնի 1547 թ. և Սեբաստիայի 1562 թ. գաղտնի ժողովների արդյունքներն ու Աբգար դպիր Եվդոկացու բանագնացությունը, Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսի՝ ազատագրական պայքարի ուղղությամբ իրականացրած գործունեությունը և դրանց առնչվող այլ հարցեր: Իր առջև դրված խնդրի բարեհաջող լուծմանը մեծապես նպաստել է հեղինակի կողմից թեմային վերաբերող աղբյուրագիտական հասանելի նյութերի գրեթե ամբողջական ուսումնասիրությունը և քաջատեղյակությունը: Ամբողջովին քննական ու վերլուծական բնույթ ունի թեմային վերաբերող մասնագիտական գրականության տեսությունը, որը, բացի իր հիմնական նշանակությունից, հեղինակին լրացուցիչ հնարավորություն է ընձեռել թեմայի գիտականությունն ու արդիականությունը ներկայացնելու համար:

Ատենախոսը սկզբնաղբյուրների (արխիվային վավերագրեր ու զեկուցագրեր, որոնց մեծ մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ, ձեռագրերի հիշատակարաններ, մատենագրական երկեր), հրատարակված արխիվային փաստաթղթերի, գիտական գրականության ընձեռած փաստերի և գիտական պարբերականներում եղած առանձին հրապարակումների քննական վերլուծության հենքի վրա կատարել է արժեքավոր համալիր ուսումնասիրություն և համոզիչ փաստերով, փաստարկումներով ու մեկնաբանություններով ներկայացրել է XVI–XVII դարերի հայ ազատագրական պայքարը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղն ու դերը նշված ժամանակաշրջանի հայ ազատագրական պայքարում, արժևորել Մայր Աթոռի գահակալների՝ ազատագրական պայքարին միտված գործունեությունը:

Տեր Արարատ քահանան ներկայացրել է արժեքավոր ուսումնասիրություն, որին բնորոշ են թեմայի տրամաբանական զարգացումը, գիտական, հետազոտական ակնառու որակները, եզրահանգումների գոհացուցիչ հիմնավորվածությունը, գրագետ շարադրանքը և լեզվաոճական պատշաճ մակարդակը:

Ատենախոսությունն ունի կուռ կառուցվածք և տրամաբանական բաժանում: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից: Ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքով 159 էջ է:

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության թեմայի արդիականությունը, հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները, ժամանակագրական ընդգրկումը, հետազոտության մեթոդաբանական հիմքը, ատենախոսության գիտական նորույթը, թեմայի ուսումնասիրման աստիճանը, օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, աղբյուրագիտական հիմքը և հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, ատենախոսության ստեղծման անհրաժեշտությունը և գործնական-կիրառական նշանակությունը, ատենախոսության փորձաքննությունը, աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը:

Առաջին գլխում՝ «ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության հիմնավորումը և նպաստող հանգամանքները», որը բաժանված է երեք ենթագլուխների (1.1. «Խաղաղության և պատերազմի ընկալումներն Աստվածաշնչում և Եկեղեցում», 1.2. «ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի գաղափարական հիմքերը», 1.3. «ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարին նպաստող հանգամանքները»), ներկայացված և լուսաբանված են Հայոց եկեղեցու դիրքորոշումը պատերազմների և արյունահեղությունների, ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ, ներազգային կյանքում գոյություն ունեցող այն հանգամանքներն ու պայմանները, որոնք կարևոր էին ԺԶ–ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի գաղափարական ու գործնական հարթություններում որոշակի հաջողություններ

արձանագրելու համար: Փաստական տվյալների հիման վրա ատենախոսը եզրակացնում է, որ XVI–XVII դդ. հայ ազատագրական պայքարը ներդաշնակ է եղել եկեղեցու՝ պատերազմի և խաղաղության վերաբերյալ ընկալումներին, միաժամանակ շեշտում, որ արդի շրջանի «արդարացի պատերազմ» սկսելու միջազգային չափանիշները այս կամ այն կերպ առկա են եղել XVI–XVII դդ. հայ ազատագրական պայքարի ձևավորման և ընթացքի մեջ՝ որոշակի ազգային նկարագրով և չափանիշներով: Այնուհետև ընդգծում է, որ XVI–XVII դդ. խիստ կարևորվում էր բուն հայրենիքի շուրջ համախմբումը, պայքարի գաղափարախոսության հղկումն ու տարածումը, ինչի շնորհիվ Սուրբ Էջմիածինը XVI–XVII դդ. դառնում է կապող օղակ նախորդ դարերի եկեղեցական-քաղաքական գաղափարների և որոնումների ու XVIII դ. ծավալված հայ ազատագրական պայքարի միջև:

Երկրորդ գլխում՝ «Սուրբ Էջմիածնի 1547 թ. և Սեբաստիայի 1562 թ. ժողովների նշանակությունը ԺԶ դարի հայ ազատագրական պայքարի ծրագրերում», որը բաղկացած է երկու ենթագլուխներից (2.1. «Ս. Էջմիածնի՝ 1547 թ. խորհրդաժողովը և դրա արդյունքը», 2.2. «Սեբաստիայի՝ 1562 թ. խորհրդաժողովը և Աբգար դպիր Եվդոկացու (Թոխատեցու) բանագնացությունը»), համակողմանի անդարադարձ է կատարվել գաղտնի ժողովներին՝ ընդգծելով, որ պայքարն այս շրջանում կրել է համակարգված բնույթ: Այս իրողության կրողները դարձել են Ամենայն Հայոց Կաթողիկոսները՝ որպես շարժման կազմակերպիչներ: Փաստարկված ներկայացված և լուսաբանված են քննվող ժամանակաշրջանում տեղի ունեցած ազատագրական ոգորումների միտումներն ու առանձնահատկությունները: Այս համատեքստում քննական շարադրմամբ լուսաբանվել է Ստեփանոս Սալմաստեցու նախաձեռնությամբ գումարված խորհրդաժողովի կարևորագույն դերը, ընդ որում՝ առաջին անգամ համակարգված պայքար սկսելու և օտարի լծից ազատագրվելու խնդիր է դրվել՝ նախանշելով այն ճանապարհը, որով հետագայում երկար ժամանակ պետք է ընթանար հայ ազատագրական պայքարը: Հարկ ենք համարում շեշտել, որ այս գլխում ատենախոսը, սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների քննությամբ,

հիմնավորում է, որ 1562 թ. ժողովում հաշվի առնվեց նախորդ՝ 1547 թ. փորձառությունը և գաղտնի ժողովի գումարման վայրը պարսից տիրապետության ենթակա տարածքից՝ Ս. Էջմիածնից տեղափոխվեց Օսմանյան Թուրքիայի ենթակա տարածք: Ըստ ատենախոսի՝ խորհրդաժողովի վերաբերյալ պահպանվել են մի շարք վավերագրեր և պատմական վկայություններ, որոնց մի մասն այսօր տարբեր հետազոտողների շնորհիվ հասանելի է, սակայն այս ժողովին վերաբերող որոշ գրություններ շարունակում են անհայտ մնալ: Ատենախոսը եզրակացնում է, որ Ստեփանոս Ե. Սալմաստեցուց սկսած՝ հայ ազատագրական պայքարի գաղափարախոսներն աստիճանաբար զարգացնում էին մի նոր քաղաքական կողմնորոշման ուղղություն՝ Հայաստանն ազատագրել Ռուսաստանի օժանդակությամբ, իսկ Միքայել Ա. Սեբաստացի կաթողիկոսի նախաձեռնությամբ գումարված 1562 թ. Սեբաստիայի ժողովն էլ գնահատում որպես ազատագրական պայքարի կարևորագույն հանգրվան:

Երրորդ գլխում՝ «Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը և հայ ազատագրական պայքարը», որը բաղկացած է երկու ենթագլուխներից (3.1. «Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի՝ հայ ազատագրական պայքարի ուղղությամբ իրականացրած գործունեությունը 1655–1674 թթ.», 3.2. «Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսի 1677–1680 թթ. գործունեությունը»), համակողմանի ու հիմնավոր ներկայացվել է հայ ազատագրական պայքարի կազմակերպման գործում կարևոր դերակատարում ունեցած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գահակալ Հակոբ Դ. Ջուղայեցի հայրապետի գործունեությունը: XVII դարը համարվում է Հայոց եկեղեցու վերազարթոնքի շրջան. այն մեծ ազդեցություն է թողել ոչ միայն Հայոց եկեղեցու, այլև բովանդակ հայ ժողովրդի պատմության հետագա ընթացքի վրա: Վերազարթոնքի այս շրջանը պայմանավորված էր հատկապես XVII դարում ուսյալ և նվիրյալ հոգևորականների գործունեությամբ, ինչը և նպաստեց հայ ազատագրական պայքարի վերելքին: XVII դարի երկրորդ կեսի հայ իրականության մեջ շուրջ երկուսուկես տասնամյակ հայ ազատագրական պայքարը կազմակերպելու փորձերը սերտորեն առնչվում են Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսի անվան հետ, ուստի ատենախոսության մեջ վերոնշված ենթաբաժանումներով հանգամանալից ու համոզիչ ներկայացվել է

Հակոբ Դ. Ջուղայեցու կարևոր ներդրումը հայ ազատագրական պայքարի կազմակերպման և պայքարի հետագա կողմնորոշման հարցում: Ատենախոսը, հիրավի, կարևորելով Հակոբ Ջուղայեցու ազատագրական ձեռնարկումները, եզրակացնում է, որ նրա նպատակն էր պատրաստել հայությանն ազգային-ազատագրական պայքարի, միավորել ժողովրդի ուժերը, ստեղծել դիվանագիտական կապեր: Հակոբ Դ. Ջուղայեցու գործունեության արդյունքում հասունացել էր պահը, երբ հնարավոր դարձավ հայ ազատագրական պայքարի կազմակերպումը և քաղաքական կողմնորոշումը անիրատեսականից տեղափոխել առավել իրատեսական տիրույթ:

Եզրակացության մեջ հանրագումարի են բերվել ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Ատենախոսության ամբողջ շարադրանքում Տեր Արարատ քահանա Պողոսյանն ակնառու կերպով դրսևորել է բարեխիղճ հետազոտողին հարիր քննախույզ, օբյեկտիվ և նորովի մոտեցում, ինչպես առանձին հարցերի, այնպես էլ հետազոտության հիմնախնդրի նկատմամբ ամբողջությամբ վերցրած: Ատենախոսությունն ընթերցվում է հետաքրքրությամբ: Այն արժեքավոր ներդրում է հայոց պատմության՝ քննարկվող ժամանակաշրջանի ամբողջական ուսումնասիրության գործում:

Բարձր գնահատելով ատենախոսության գիտական արժեքը՝ միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ կատարված աշխատանքը զերծ չէ թերություններից, որոնց կապակցությամբ ցանկանում ենք արտահայտել մեր դիտարկումներն ու նկատառումները:

1. Ատենախոսության մեջ տեղ են գտել վրիպակներ (էջ 11, 12, 19, 51, 70, 74, 104 և այլն):

2. Որոշ հատուկ անունների սխալ տառադարձման կամ սխալագրության դեպքեր կան (օրինակ, Էզով (էջ 12), փոխանակ՝ Եզով, Օնոփիրոս, Ոնոփիրոս (էջ 104), փոխանակ՝ Օնոփրիոս, Ոնոփրիոս, Հրանչոիս Փալլիվի (էջ 80, 98, 100), փոխանակ՝ Ֆրանսուա Պալյու կամ Փալյու): Սակայն սա, թերևս, գալիս է

ատենախոսից առաջ այս հեղինակի անունը սխալ տառադարձած կամ գործածած ուսումնասիրողից:

3. Ցանկալի կլիներ, որ ատենախոսը շարադրանքում ներկայացներ նաև Հայոց եկեղեցու նվիրապետական մյուս աթոռների գործունեությունը կամ նրանց առանձին ներկայացուցիչների՝ Հայաստանի ազատագրության նպատակով իրականացրած քայլերը, այլապես սրբագրելի կարելի է համարել ատենախոսության վերնագիրը:

4. Աշխատանքում տեղ են գտել բառեր և բառակապակցություններ, որոնք լրացուցիչ բացատրման կարիք ունեն (օրինակ, «հոգևորականության բոլոր դասերը» (էջ 5):

5. Կան ոչ հստակ ձևակերպված մտքեր, օրինակ, «Հայկական տպագրությունը նաև մտավոր զենք է ծառայում հայ ազատագրական պայքարին: Այն ԺԷ դարում առավել ընդգծված է արտահայտվում Ամստերդամի հայկական տպարանի հրատարակություններում, որոնց տարածումը հայության շրջանում... » (էջ 29) կամ ոչ համոզիչ մտքեր, օրինակ, խոսելով 1562 թ. ժողովի մասնակիցների մասին, ատենախոսը նշում է, թե Սուլթանշահը անուն առ անուն հիշատակում է շուրջ 22 բարձրաստիճան եկեղեցականների, որոնց մեջ առանձնահատուկ ուշադրության է արժանի Երուսաղեմի հայոց պատրիարք Անդրեաս արքեպիսկոպոսը: Ժամանակի Հայոց եկեղեցու նվիրապետական այլ աթոռների ներկայացուցիչների անուն չհիշատակելով՝ ատենախոսը եզրակացնում է. «...կարող ենք պնդել, որ ազգային ազատագրական պայքարում՝ այս փուլից սկսած, ներգրավված էին Հայոց Եկեղեցու նվիրապետական բոլոր աթոռները» (էջ 65):

6. Ենթագլուխներում ու դրանց ենթակետերում արված ոչ բոլոր ամփոփումներն են տեղ գտել ատենախոսության վերջում զետեղված եզրակացություններում. ցանկալի կլիներ ամբողջական դարձնել եզրակացությունները:

Վերոհիշյալ դիտարկումները, սակայն, ամենևին էլ չեն նսեմացնում աշխատանքի գիտական լուրջ արժեքը և ատենախոսի՝ գիտական աշխատանք կատարելու անուրանալի շնորհներն ու կարողությունը, իսկ ատենախոսությունը

որպես մենագրություն տպագրելու դեպքում՝ հնարավոր է վերացնել նաև նշված թերությունները:

Ի մի բերելով վերը շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ գրախոսվող ատենախոսության թեման արդիական է, ունի գիտաճանաչողական և հայագիտական կարևոր նշանակություն: Այն լուրջ ներդրում է Հայոց եկեղեցու և հայ ժողովրդի ու հայ ազատագրական պայքարի պատմությունն ամբողջացնելու ուղղությամբ:

Ամփոփելով նշենք, որ ատենախոսությունը գրված է պատմականության և գիտականության դիրքերից: Հեղինակի հրատարակած հոդվածները և սեղմագիրն արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող բարձր պահանջները, նշված թերություններն էլ ամենևին չեն ստվերում աշխատությունը, ուստի միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող Հայոց պատմության մասնագիտական խորհրդին՝ Արժանապատիվ Տեր Արարատ քահանա Պողոսյանին շնորհել իր հայցած «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.թ.՝ Ա. Մ. Մալոյան

Ստորագրությունը հաստատում եմ,
ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթության զարգացման և նորարարությունների
ազգային կենտրոն» (ԿԶՆԱԿ) հիմնադրամի տնօրենի Ժ/Պ՝ Ա. Խ. Թորոսյան

24. 08. 2023 թ.